



**ՄԻԱՎ-Ի
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ
ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ
ԻՆՉՈՒՐ Է ԴԱ ԿԱՐԵՎՈՐ**



Գիտե՛ս արդյո՞ք

ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց մոտ 2/3-ը չգիտի իր կարգավիճակի մասին: Դա պայմանավորված է հիվանդության զարգացման և ընթացքի առանձնահատկություններով:

ՄԻԱՎ վարակն ունի երկարատև (միջինը 8-10 տարի) թաքնված՝ անախտանշան շրջան, որի ընթացքում մարդն իրեն զգում է գործնականորեն առողջ, չի ունենում հիվանդության ակնառու ախտանշաններ և կարող է անգամ չկասկածել իր վարակված լինելու մասին, սակայն այդ ընթացքում նա կարող է վարակը փոխանցել ուրիշներին:



Ինչպե՛ս իմանալ՝ վարակված ես ՄԻԱՎ-ով, թե ոչ

Մարդու արտաքին տեսքից հնարավոր չէ իմանալ նրա վարակված լինելու մասին:

ՄԻԱՎ-ով վարակված մարդը կարող է ունենալ միանգամայն առողջ տեսք:

Օրգանիզմում ՄԻԱՎ-ի առկայության մասին կարելի է իմանալ միայն անցնելով համապատասխան հետազոտություն: Արյան ընդհանուր կլինիկական կամ կենսաքիմիական հետազոտությամբ, քսուկների հետազոտությամբ հնարավոր չէ հայտնաբերել ՄԻԱՎ-ը: Դրա համար հարկավոր է անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ արյան հատուկ հետազոտություն՝ իմունաֆերմենտային անալիզ (ԻՖԱ):



Ինչպիսի՞ն կարող է լինել ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքը

Այն կարող է լինել **դրական** կամ **բացասական**:

Դրական արդյունքը նշանակում է, որ հետազոտվողի արյան մեջ հայտնաբերվել են ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ, ինչը վկայում է նրա՝ ՄԻԱՎ-ով վարակված լինելու մասին: Մարդը, որի մոտ հայտնաբերվել են ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ, համարվում է ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական:

Բացասական արդյունքը նշանակում է, որ հետազոտվողի արյան մեջ ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմիններ չեն հայտնաբերվել, ինչն ամենայն հավանականությամբ վկայում է նրա մոտ վարակի բացակայության մասին:

Սակայն հարկ է իմանալ, որ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքը բացասական կարող է լինել նաև, այսպես կոչված, «պատուհանի շրջանում», երբ մարդը վարակված է ՄԻԱՎ-ով, սակայն դրա նկատմամբ առաջացած հակամարմինների քանակը դեռևս բավարար չէ արյան լաբորատոր հետազոտությամբ հայտնաբերվելու համար: Չնայած հետազոտության բացասական արդյունքին՝ արդեն իսկ այս շրջանում վարակված մարդը կարող է վարակը փոխանցել ուրիշներին:

«Պատուհանի շրջանը» տևում է միջինը 3 ամիս: Այդ պատճառով ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն պետք է անցնել հնարավոր վարակման պահից առնվազն 3 ամիս հետո: Այդ ընթացքում, քանի դեռ հայտնի չէ ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակը, հարկավոր է սեռական հարաբերությունների ժամանակ մշտապես օգտագործել պահպանակ, ձեռնպահ մնալ որպես դոնոր արյուն հանձնելուց, իսկ կանանց խորհուրդ է տրվում խուսափել հղիությունից:

**ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը
հնարավորություն է տալիս անտորոշելու
ՄԻԱՎ վարակը վաղ շրջանում, երբ
հիվանդության արտաքին դրսևորումներ
դեռևս չկան:**



**Ինչո՞վ կարող է օգտակար լինել
քեզ ՄԻԱՎ-ի վերաբերյալ
հետազոտությունը**

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունը կօգնի քեզ ճշտելու ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակը, ինչը չափազանց կարևոր է:

- Եթե հետազոտության արդյունքում պարզվի, որ վարակված չես ՄԻԱՎ-ով, բայց միաժամանակ ունես ռիսկային, այսինքն՝ ՄԻԱՎ-ով վարակվելու տեսանկյունից վտանգավոր վարքագիծ, դու կարող ես փոխել վարքագիծդ և խուսափել ապագայում ՄԻԱՎ-ով վարակվելուց:
- Եթե հետազոտության արդյունքում պարզվի, որ վարակված ես ՄԻԱՎ-ով, կարող ես դիմել ՄԻԱՎ վարակի ժամանակ բուժում, խնամք և աջակցություն տրամադրող հաստատություններ, ժամանակին ստանալ անհրաժեշտ բուժօգնություն, ինչը կօգնի պահպանել լավ ինքնագագողությունն ու ապրել երկար, լիարժեք կյանքով, ունենալ վարակից զերծ երեխաներ: Իմանալով ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակիդ մասին կարող ես խուսափել վարակը զուգընկերոջդ փոխանցելուց:

**ՄԻԱՎ/ՉԻԱՆ-ի ժամանակակից բուժումը
Հայաստանի Հանրապետությունում
հասանելի է և ՀՀ քաղաքացիներին
տրամադրվում է անվճար:**

**ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակի
իմացությունը կարևոր է
յուրաքանչյուրի համար**

**Իմացի՞ր կարգավիճակ՞
անցնելով ՄԻԱՎ-ի վերաբերյալ
հետազոտություն և պահպանի՞ր
առողջությունդ**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն կարելի է անցնել ՁԻԱԳ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում (ք.Երևան, Ավան, Աճառյան 2): ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունն անվճար է, ուղեկցվում է նախա- և հետքեստային խորհրդատվությամբ, ցանկության դեպքում կարող է կատարվել անանուն: Հետազոտության արդյունքների գաղտնիությունը երաշխավորվում է:

ՄԻԱՎ վարակին առնչվող հարցերի պատասխաններ կարելի է ստանալ նաև «Թեժ գիծ» ծառայության միջոցով՝ (010) 61-08-20, ամեն օր, բացի հանգստյան օրերից, ժ. 09.00-18.00:



Investing in our future

The Global Fund

To Fight AIDS, Tuberculosis and Malaria

Հրատարակված է ՁԻԱԳ-ի, տուբերկուլոզի
և մալարիայի դեմ պայքարի
Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ

Ենթակա չէ վաճառքի
Not for sale